## Հայտատուի իրավունքներն ու պարտավորությունները

**Հայտատուի իրավունքներն են.**

- Տեղեկանալ արտադրանքի համապատասխանության գնահատման աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին:
- Պահանջել պահպանել աշխատանքի ընթացքում ստացված տեղեկատվության գաղտնիությունը:
- Արտադրանքի սերտիֆիկացման մարմնի կողմից ոչ օրինաչափ գործողությունների վերաբերյալ բողոքների կամ գանգատների առկայության դեպքում դիմել «Փ.ԱԲԱՋՅԱՆ» ՍՊԸ-ի տնօրենին:

**Հայտատուի պարտավորություններն են.**

- Ներկայացնել սերտիֆիկացման հայտեր՝ սերտիֆիկացման ոլորտին համապատասխան:
- Կատարել սերտիֆիկացման պահանջները, այդ թվում՝ համապատասխան փոփոխությունների իրականացումը, երբ դրանք պահանջվում են արտադրանքի սերտիֆիկացման մարմնի կողմից:
- Պահպանել արտադրանքի սերտիֆիկացման մարմնի կողմից և նորմատիվ փաստաթղթերով սահմանված համապատասխանության գնահատման ընթացակարգերի պայմանները և տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն արտադրանքի համապատասխանությունը հավաստելու համար:
- Սահմանված ժամկետներում վճարել արտադրանքի համապատասխանության գնահատման աշխատանքների համար:
- Եթե սերտիֆիկացումը վերաբերում է գործող արտադրությանը, ապա սերտիֆիկացված արտադրանքը շարունակաբար համապատասխանի արտադրանքին ներկայացվող պահանջներին:
- Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝

1) գնահատման և հսկողության (եթե պահանջվում է) իրականացման համար, այդ թվում՝ ուսումնասիրության համար փաստաթղթերի և գրառումների տրամադրումը, և համապատասխան սարքավորումների, տեղանքի(ների), տարածքի(ների), անձնակազմի և հայտատուի ենթակապալառուների ուսումնասիրության մատչելիության ապահովումը,

2) գանգատների հետաքննության համար:

- Չօգտագործել արտադրանքն այնպես, ինչը կարող է հեղինակազրկել արտադրանքի սերտիֆիկացման մարմնին և չանել որևէ հայտարարություն իր արտադրանքի սերտիֆիկացման մասին, որը արտադրանքի սերտիֆիկացման մարմինը կարող է համարել մոլորեցնող կամ չթույլատրված:
- Սերտիֆիկացումը կասեցվելու, չեղյալ ճանաչվելու կամ դադարեցվելու դեպքում՝ դադարեցնել բոլոր տեսակի գովազդային նյութերի օգտագործումը, որոնք

պարունակում են որևէ հղում այդ մասին և ձեռնարկել սերտիֆիկացման սխեմայով պահանջվող գործողությունները (օրինակ, սերտիֆիկացման փաստաթղթերը վերադարձնելը) և սահմանված այլ միջոցառումները։

- Եթե հայտատուն սերտիֆիկացման փաստաթղթերի պատճենները տրամադրում է ուրիշներին, ապա այդ փաստաթղթերը պետք է կրկնօրինակվեն ամբողջությամբ կամ ինչպես սահմանված է սերտիֆիկացման սխեմայով։
- Իր արտադրանքի սերտիֆիկացումը լրատվամիջոցների հետ հաղորդակցության միջոցներում վկայակոչելիս, ինչպիսիք են՝ փաստաթղթերը, բրոշյուրները կամ գովազդումը, համապատասխանել արտադրանքի սերտիֆիկացման մարմնի կամ սերտիֆիկացման սխեմայով սահմանված պահանջներին։
- Համապատասխանել սերտիֆիկացման սխեմայով սահմանված համապատասխանության նշանների օգտագործմանը և արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությանը ներկայացվող բոլոր պահանջներին։
- Պահպանել իրեն հայտնի դարձած սերտիֆիկացման պահանջներին համապատասխանության վերաբերյալ բոլոր գանգատների գրառումները և արտադրանքի սերտիֆիկացման մարմնի պահանջի դեպքում տրամադրել դրանք, և

1) ձեռնարկել համապատասխան գործողություններ՝ նման գանգատների և սերտիֆիկացման պահանջներին համապատասխանության վրա ազդող արտադրանքի հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ,

2) փաստաթղթավորել ձեռնարկված գործողությունները։

- Անհապաղ տեղեկացնել արտադրանքի սերտիֆիկացման մարմնին այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել սերտիֆիկացման պահանջներին համապատասխանելու իր կարողության վրա։